

Վաղինակ Ծ. Վրդ. Մելոյեան

ՉԱՐՉԱՐԱՆԱՑ ԽԱՉԵԼՈՒԹԻՒՆ ԽԱԻԱՐՈՒՄ

1) Յիսուսի չարչարանքները - - - - -	2
2) Յիսուսի ծաղրուիլն ու ձեծուիլը - - - - -	10
3) Քրիստոսի չարչարանքներէն ճնունդ առած բարիքները - - - - -	16
4) Քրիստոսի ծարաւը - - - - -	19
5) Տիրոջ ուղղուած սրտի խօսք - - - - -	23
6) Քրիստոսի խաչելութիւնը - - - - -	31
7) Երկինքի խաւարումին մասին - - - - -	39

Քրիստոսի Չարչարանքները

Տէր Յիսուս, Փրկի՛ չ մարդկութեան:

Ցաւցուեցան մատներդ:

Այն մատներդ՝ որոնցմով ուրիշներուն ցաւերը փարատեցիր:

Այն մատներդ՝ որոնցմով կոյրերու աչքեր ու խուլերու ականջներ բացիր:

Այն մատներդ՝ որոնցմով մեր մատներուն Չարին դէմ պատերազմիլ սորվեցուցիր:

Այն մատներդ՝ որոնցմով սգաւորին արցունքները սրբեցիր:

Այն մատներդ՝ որոնցմով ցոյց տուիր կեանքի ճամբան, փրկութեան ճամբան, Աստուծոյ ճամբան:

Ապտակուեցան երեսներդ:

Այն երեսներդ՝ որոնց նայիլ կը սարսափին սերովբէներն անգամ:

Այն երեսներդ՝ որոնց նայիլ փափաքեցան պատմութեան բոլոր սուրբերը:

Այն երեսներդ՝ որոնց տեսութիւնը անբացատրելի ուրախութիւն ու անսահման երջանկութիւն կը բերէ մեր սիրտերուն:

Այն երեսներդ՝ որոնք համբուրուեցան մատնիչ Յուդային կողմէ, եւ որոնց համբոյրը, կեանքի փոխարէն՝ մահ բերաւ անոր, որովհետեւ ան իր Տիրոջմէն աւելի դրամը սիրեց:

Այն երեսներդ՝ որոնց լոյսովը կ'առաջնորդուին մեղքի խաւարը մերժողները:

Այն երեսներդ՝ որոնք ձաղկուեցան, որպէսզի մենք արժանի դառնանք Աստուծոյ երեսը տեսնելու:

Բոնցքահարուեցան աչքերդ:

Այն աչքերդ՝ որոնք միայն սիրով նայեցան՝ սիրոյ կարօտ մարդոց, որոնք միայն գորովով նայեցան՝ գորովի կարիքը ունեցողներուն:

Այն աչքերդ՝ որոնք մարդոց կեանքին մէջ երբեք սխալներ չփնտոեցին ու մեղքեր չորոնեցին, զանոնք դատապարտելու նպատակով:

Այն աչքերդ՝ որոնք տեսան անտեսուածը, լքուածն ու անհրաւուածը:

Այն աչքերդ՝ որոնք տեսան քեզ տեսնել ուզող Զակքէտները:

Այն աչքերդ՝ որոնք տեսան քեզ սիրող ու աշխարհի սէրը մերժող սիրտերը:

Այն աչքերդ՝ որոնք տեսան քեզի հետեւիլ փափաքող սիրտերը:

Այն աչքերդ՝ որոնցմէ սէր կաթեցաւ սիրոյ կարօտ հոգիներուն մէջ:

Գանակոծուեցաւ գլուխդ:

Այն գլուխդ՝ զորս ամէն մարդ կ'ուզէ իր կեանքը տալ, միայն թէ կարենայ երկվայրկեանի մը համար զայն իր կուրծքին վրայ հանգչեցնել:

Այն գլուխդ՝ որ պիտի դառնար գլուխը, այլ խօսքով՝ առաջնորդն ու պաշտպանը եկեղեցիին:

Այն գլուխդ՝ որուն դիմաց օր մը բոլոր մարդիկ իրենց գլուխները պիտի խոնարհեցնեն:

Այն գլուխդ՝ որ ծռեցաւ խաչին վրայ, որպէսզի մեղքին դիմաց ծռած մեր գլուխները վեր բարձրացնէ:

Այն գլուխդ՝ որ դատաստանի օրը պիտի հռչակուի Գլուխը բոլոր գլուխներուն, Գլուխը հրեղէն ու հողեղէն բոլոր արարածներուն:

Այն գլուխդ՝ որ մեզ պիտի դարձնէր ճգմիչը Չարի գլուխին:

Ծեծուեցաւ ու արիւնեցաւ բերանդ:

Այն բերանդ՝ որ միայն բարին խօսեցաւ ու ճշմարտութիւնը բացայայտեց:

Այն բերանդ՝ որ աղօթեց ու աղօթել սորվեցուց:

Այն բերանդ՝ որ ձաղկեց մեղքը եւ ներեց ու կանգնեց մեղաւորը:

Այն բերանդ՝ որ քաջալերեց գլորածը ու դիմակազերծեց կեղծաւորը:

Այն բերանդ՝ որ սգաւորը մխիթարեց, յուսահատը յուսադրեց, կոտորածը բժշկեց, վհատածը քաջալերեց:

Այն բերանդ՝ որ միայն հաշտութիւն պատգամեց, եւ միայն խաղաղութիւն ատեց:

Այն բերանդ՝ որ սորվեցուց մեր բերանները փառաբանութեամբ, շնորհակալութեամբ ու գոհութեամբ բանալ:

Այն բերանդ՝ որմէ բղխեցան կենսատու խօսքեր:

Խլուեցաւ պատմուճանդ:

Այն պատմուճանդ՝ որով մեղքի արիւնահոսութիւններ դադրեցան:

Այն պատմուճանդ՝ որով մեր հոգիի մերկութիւնը ծածկեցիր:

Այն պատմուճանդ՝ որուն փոխարէն փառքի ու պատիւի պատմուճանով զարդարեցիր մեզ:

Այն պատմուճանդ՝ որով կը ջերմանան ցրտահար հոգիներ:

Այն պատմուճանդ՝ որ պիտի հազցնես քու բոլոր սուրբերուդ:

Այն պատմուճանդ՝ որ մեզի շնորհեցիր մեղքի ցնցոտիներուն փոխարէն:

Խլեցին Փրկչիդ պատմուճանը, դուն որ տուիչն ես այդ պատմուճանին:

Խլեցին քարոզիչիդ պատմուճանը, որպէսզի անոր փոխարէն վրադ առնես Քահանայապետիդ զգեստը, եւ դառնաս մեր քաւչարար միջնորդը Աստուծոյ մօտ:

Վիրաւորուեցան ուսերդ:

Այն ուսերդ՝ որոնց վրայ կրեցիր մեղքով ծանրացած մեր խաչը:

Այն ուսերդ՝ որոնց վրայ ուրախութեամբ կը շալկես գտած ոչխարներդ:

Այն ուսերդ՝ որոնց վրայ մեզ կը կրես մեր մանկութենէն մինչեւ ծերութիւն:

Այն ուսերդ՝ որոնց վրայ մեզ կը շալկես մեր տկարութեան ու գլորումի օրերուն:

Այն ուսերդ՝ որոնց վրայ կը կրես մեր հոգերն ու բեռները:

Այն ուսերդ՝ որոնց վրայ կը վերցնես փոքրիկներդ, որպէսզի չկորսուին աշխարհի փոշիներուն մէջ:

Այն ուսերդ՝ ուր կը դնես ապաշխարող մեղաւորը, որ-
պէսզի անիկա ապահով ըլլայ աշխարհի հարուածներէն:

Այն ուսերդ՝ ուր կը բարձրացնես բարձրեալդ օրհնաբա-
նողները:

Հարուածուեցաւ կուրծքդ:

Այն կուրծքդ՝ որ սիրով կը բարբախէ սիրոյ կարօտ մար-
դուն հանդէպ:

Այն կուրծքդ՝ որուն վրայ հանգչեցնելով մեր գլուխը՝
կրնանք հոգեկան մեր հանգիստը գտնել:

Այն կուրծքդ՝ որուն կռթնողը իր խաղաղութիւնը կը
գտնէ:

Այն կուրծքդ՝ որ բաց է որբին ու աղքատին դիմաց:

Այն կուրծքդ՝ որ կը զգուէ զգուանքի կարօտ մարդը:

Այն կուրծքդ՝ որ որ տեղ կու տայ տեղ չունեցողին, եւ
տեղ կը կանգնի անտեղ եղողին:

Այն կուրծքդ՝ ուրկէ հեռացողը չունի փրկութիւն, եւ ուր
եկողը չունի կորուստ:

Այն կուրծքդ՝ որ կ'առողջացնէ հիւանդ հոգին, կ'անմա-
հացնէ մահկանացուն, եւ կը բուժէ անբուժելին:

Տանջուեցաւ մարմինդ:

Այն մարմինդ՝ որով կրեցիր մեր անկրելի մեղքերը, եւ
քաւեցիր մեր անքաւելի անօրէնութիւնները:

Այն մարմինդ՝ որով մենք կազմեցինք քու մարմինդ:

Այն մարմինդ՝ որով մեր մարմինները բժշկուեցան ու
սրբուեցան:

Այն մարմինդ՝ որուն ազատութեամբը մենք ազատե-
ցանք մեր մարմիններուն գերութենէն:

Այն մարմինդ՝ որով մեր մարմինները նորոգուեցան:

Այն մարմինդ՝ որով մեր մարմինները դարձան տաճար
Սուրբ Հոգիին:

Այն մարմինդ՝ որով մենք անմարմին հրեշտակներուն
դասակից եղանք:

Այն մարմինդ՝ որ իր յարուցեալ վիճակին մէջ դարձաւ
նախապատկերացումը մեր յարուցեալ մարմիններուն:

Տրտմեցուեցաւ սիրտդ:

Այն սիրտդ՝ որմէ միայն սէր հոսեցաւ ու գորով բղխե-
ցաւ:

Այն սիրտդ՝ որմէ միայն քաղցրութիւն ու գթութիւն ճա-
ռագայթեց:

Այն սիրտդ՝ որ բացուեցաւ բոլորին դիմաց, ընդունեց
բոլորը, սիրեց բոլորը, եւ իր մէջ տեղ տուաւ բոլորին:

Այն սիրտդ՝ որուն մէջ իրենց առանձին տեղը ունին
առանձին մնացածները:

Այն սիրտդ՝ որուն մէջ իրենց հանգիստը կը գտնեն
աշխարհի կողմէ անհանգստացուածները:

Այն սիրտդ՝ որ համբերեց ամէն նախատինքի, որպէսզի
տեղը ըլլայ աշխարհի կողմէ նախատուածներուն:

Այն սիրտդ՝ որ խոցուեցաւ, որպէսզի բուժէ խոցերը մեր
սիրտերուն, եւ վիրաւորուեցաւ՝ որպէսզի դառնայ բալասա-
նը մեր վերքերուն:

Բեւեռուեցան ոտքերդ:

Այն ոտքերդ՝ որոնք քալեցին աղքատին հետ ու աղքա-
տին համար, լքուածին հետ ու լքուածին համար, տկարին
հետ ու տկարին համար:

Այն ոտքերդ՝ որոնք քալեցին ու քալել սորվեցուցին սրբութեան ճամբէն, արդարութեան ճամբէն:

Այն ոտքերդ՝ որոնք եթէ արցունքի իւղով օծուին՝ մեղքեր կը սրբուին ու յանցանքներ կը քաւուին:

Այն ոտքերդ՝ որոնք եթէ համբուրուին՝ հոգիներ կը բժշկուին ու սիրտեր կը մխիթարուին:

Այն ոտքերդ՝ որոնք եթէ պաշտուին՝ փրկութիւն կը շնորհեն:

Այն ոտքերդ՝ որոնց եթէ հետեւինք՝ անվտանգ երկինք կը հասնինք:

Այն ոտքերդ՝ որոնցմով կոխուեցաւ մեր փրկութեան թշնամին՝ Սատանան:

Ծակուեցան ձեռքերդ:

Այն ձեռքերդ՝ որոնք բարձրացան միայն օրհնելու, միացան՝ միայն աղօթելու:

Այն ձեռքերդ՝ որոնք երկարեցան օգնութեան կարիքը ունեցողին:

Այն ձեռքերդ՝ որոնք վերքեր բուժեցին, գետին ինկածը բարձրացուցին, գլորածը վերականգնեցին:

Այն ձեռքերդ՝ որոնցմով ստեղծուեցանք, փայփայուեցանք, պաշտպանուեցանք ու զօրացանք:

Այն ձեռքերդ՝ զորս բարին գործեցին ու բարին գործել սորվեցուցին:

Այն ձեռքերդ՝ որոնք սկար ձեռքերը զօրացուցին:

Այն ձեռքերդ՝ որոնց հայումով կեանքեր կը փոխուին, սիրտեր արթնութիւն կ'ապրին, հոգիներ կը մաքրուին:

Այն ձեռքերդ՝ զորս կը կանչեն ու կանչուածը հաստատ կը պահեն:

Խոցուեցաւ կողդ:

Այն կողդ՝ որով բուժուեցաւ կողը Ադամին ու պատմութեան բոլոր Ադամներուն, եւ որով ներուեցան բոլոր կողակիցները անոնց:

Այն կողդ՝ որմէ հոսող արիւնով սրբուեցանք, եւ որմէ հոսող ջուրով լուացուեցանք, ու Աստուծոյ ընծայուեցանք:

Այն կողդ՝ որուն խոցը դարձաւ անմահարար բաժակ:

Այն կողդ՝ որուն խոցը դարձաւ սկիհ, ուրկէ հաւատացեալներ կեանքի հացը ճաշակեցին ու կը ճաշակեն:

Խոցուեցաւ կողդ, որպէսզի ալ Չարը չկարենայ խոցել ու զգեսնել մեզ:

Խոցուեցաւ կողդ նետով, որպէսզի բուժես մեղքի նետով խոցուած հոգիները:

Կ'երկրպագենք խոցերդ, եւ կը պաշտենք ու կը համբուրենք զանոնք:

Յիսուսին Ծաղրուիլն Ու Ծեծուիլը

«Ապա սկսան թքնել անոր երեսին եւ ծեծեցին զայն. ոմանք կ'ապտակէին զինք ու կը հարցնէին. "Քրիստոսն է՞, գիտցի՞ր, ո՞վ է քեզի զարնողը"» (Մտ 26.67-68):

1) Հռոմայեցի զինուորները Յիսուսը ծաղրելէ ու ծեծելէ առաջ՝ տաճարին ու քահանայապետին սպասաւորները իրենք նախ ծաղրեցին ու ծեծեցին զինք: Այսօր ալ եկեղեցւոյ սպասաւորները իրենք են որ կը ծաղրեն ու կը ծեծեն Յիսուսը իրենց մեղքերով:

2) Թքնեցին Յիսուսի երեսին, մինչդեռ Յիսուս իր թուքով կոյրերու աչքեր բացաւ: Մարդիկ թուքը իբրեւ անարգանքի նշան գործածեցին, իսկ Յիսուս զայն իբրեւ դեղ գործածեց:

3) Ծեծեցին Յիսուսը որ աշխարհ եկած էր ազատելու զիրենք մեղքի ծեծէն ու Սատանային ծաղր ու ծանակէն: Իրենց ձեռքերով ծեծեցին Յիսուսը՝ որուն ձեռքերով ստեղծուած էին:

4) «Ծեծեցին»: Ծեծը մէկ տեսակ չէր: Այս բառին մէջ կ'իյնան ձեռքի բռունցքն ու ոտքի կիցը:

5) Ապտակեցին Յիսուսի այն երեսը՝ որուն փառքին սերովբէներն ու քերովբէներն անգամ չեն համարձակիր նայիլ. այն երեսը՝ որուն ներկայութեան մէջ լեցուն ուրախութիւն կայ (Մտ 16.11, 43.4):

6) Ամենագէտ ու ծածկագէտ Աստուծոյ ըսին. «Գիտցի՞ր, ո՞վ է քեզի զարնողը»:

7) Երբ թքնեցին Յիսուսի երեսին, եւ երբ ծեծեցին ու ապտակեցին զինք, Յիսուս ոչ միայն չհակառակեցաւ անոնց, այլ նոյնիսկ իր երեսը չդարձուց անոնցմէ եկող նախատինքին, եւ այդ ձեւով իրականացաւ մարգարէութիւնը որ կ'ըսէ. *«Իմ կռնակս զարնողներուն եւ այտերս փետտողներուն տուի. իմ երեսս նախատինքէն ու թուքէն չծածկեցի»* (Ես 50.6):

«Զինուորները Յիսուսը տարին կառավարիչին պալատը, ուր անոր շուրջ հաւաքուեցաւ զինուորներու ամբողջ գունդը: Ապա մերկացուցին Յիսուսը եւ անոր ուսերուն նետեցին կարմիր քղամիդ մը: Փուշէ պսակ մը հիւսելով դրին անոր գլխուն եւ եղեգ մըն ալ տուին աջ ձեռքին: Զինուորները ծունկի կու գային անոր առջեւ եւ ծաղրելով կ'ըսէին. "Ողջո՛յն, Հրեաներո՛ւ թագաւոր": Կը թքնէին անոր երեսին, եղեգը ձեռքէն կ'առնէին եւ գլխուն կը զարնէին: Զայն ծաղրելէ ետք, վրայէն հանեցին քղամիդը եւ հագցուցին իր զգեստները, եւ ապա տարին զայն խաչելու» (Մտ 27.27-31):

1) Պիղատոս *«Յիսուսը խարազանել տալէ ետք՝ զինուորներուն յանձնեց, որպէսզի խաչեն»*, բայց զինուորները Յիսուսը խաչելու տանելէ առաջ, նախ զինք *«տարին կառավարիչին պալատը, ուր անոր շուրջ հաւաքուեցաւ զինուորներու ամբողջ գունդը»*: Յիսուս քահանայապետին ու տաճարին սպասաւորներուն կողմէ ծեծ ուտելէ ու ծաղրուելէ ետք (Մտ 26.67-68), հիմա պահը հասած էր որ ծեծ ուտէր ու ծաղրուէր Հռոմայեցի զինուորներուն կողմէ: Խաչի մահուան դատապարտուած ռեւէ անձ նախ ծաղր ու ծանակ կ'ըլլար եւ անկէ ետք միայն կը տարուէր խաչուելու.

սա Հռոմայեցիներուն սովորութիւնն էր: Քանի մը զինուորներ չէին որ ծեծեցին Յիսուսը, այլ զինուորներու ամբողջ գունդ մը:

2) «Մերկացուցին Յիսուսը»: Մերկացուցին Փրկիչը իր հագուստէն, որ աշխարհ եկած էր փրկութեան հագուստ շնորհելու մեզի: Մերկացուցին մարմինը անոր՝ որ եկած էր ծածկելու մեր հոգիին մերկութիւնը: Խլեցին իր վրայէն այն հագուստը՝ որուն քղանցքին հպումով մեղքի արիւնահոսութիւններ դադրեցան. այն հագուստը՝ որով կը ջերմանան ցրտահար հոգիներ. այն հագուստը՝ որ օր մը պիտի ըլլայ հագուստը բոլոր սուրբերուն. այն հագուստը՝ որ մեզի շնորհուեցաւ մեղքի ցնցոտիներուն փոխարէն:

3) «Անոր ուսերուն նետեցին կարմիր քղամիդ մը»: Կարմիր քղամիդը արքայական բան մը չէր, այլ այն լաթն էր որ Հռոմայեցի բարձրաստիճան զինուորականներ կը կրէին իրենց ուսերուն՝ ի նշան փառքի ու պատիւի: Կարմիր քղամիդին ներկայութիւնը ցոյց կու տայ որ Յիսուսը ծաղրողներն ու ծեծողները միայն հասարակ զինուորները չէին, այլ նաեւ՝ բարձրաստիճան զինուորականները: Փառքի ու պատիւի նշան եղող կարմիր քղամիդը Յիսուսի ուսերուն նետեցին, բայց զինք փառաւորելու ու պատուելու փոխարէն՝ անարգեցին: Եւ արդարեւ, այս աշխարհի տուած փառքը անարգանք է: Որոշ մեկնիչներ կ'ըսեն թէ կարմիր քղամիդը կը ներկայացնէ մեղքի արիւնով ներկուած մարդկութիւնը, զոր Յիսուս իր վրայ առաւ, որպէսզի սրբեր զայն: Ուրիշներ կարմիր քղամիդը կը նկատեն խորհրդանիշ Յիսուսի արեան, որ Յիսուս կամովին իր վրայ առաւ՝ բացայայտելու համար թէ մարդոց փրկութիւնը իր արիւնով պիտի ըլլար:

4) «Փուշէ պսակ մը հիւսելով դրին անոր գլխուն»: Զինուորները փուշերու ամբողջութիւն մը առին եւ զանոնք ոլորելով պսակ մը հիւսեցին եւ զայն դրին երկինքի ու երկրի թագաւորին գլխուն: Մեկնիչներ կ'ըսեն, թէ փուշէ պսակը այնպիսի ձեւով հիւսուած ու պատրաստուած էր, որ որոշ փուշեր խորունկ կերպով մտած էին Յիսուսի գանկին մորթին մէջ, եւ ուստի՝ չէր կրնար անոր գլուխէն վար իյնալ: Երբ զինք Գողգոթա պիտի տանէին՝ փուշէ պսակը գլուխէն հանեցին, եւ զինք խաչ բարձրացնելէ ետք՝ պսակը վերստին գլխուն դրան, անոր փուշերը գանկին մորթին մէջ միւսելով: Փուշէ պսակին զետեղումը Յիսուսի գլխուն հարկաւ ունէր իր խորհրդական իմաստը. առաջին Ադամին մեղանշումին պատճառով Աստուած անիծեց երկիրը եւ զայն դատապարտեց փուշ եւ տատասկ բուսցնելու (Մն 3.17-18). Յիսուս իր գլխուն վրայ փուշէ պսակ ընդունելով՝ վերցուց այդ անէծքը:

5) «Եւ եղեգ մըն ալ տուին աջ ձեռքին»: Եղեգին մէջ դատարկ կ'ըլլայ. դատարկ բան տուին Յիսուսի ձեռքին որ աշխարհը լեցնողն է: Եղեգ տուին աջ ձեռքին Յիսուսի՝ որ օր մը երկաթեայ ցուպով պիտի հովուէ ազգերը: Եղեգը կը ներկայացնէ մարդոց դատարկ գործերը, մեղսալից գործերը, զոր Յիսուս առաւ իր ձեռքին մէջ որպէսզի զանոնք առաքինութեանց փոխակերպէ ու մարդոց յանձնէ:

6) «Զինուորները ծունկի կու գային անոր առջեւ եւ ծաղրելով կ'ըսէին. "Ողջո՛յն, Հրեաներո՛ւ թագաւոր"»: Ծաղրալից կերպով ծունկի եկան Յիսուսի առջեւ, որուն առջեւ ամբողջ աշխարհը օր մը ծունկի պիտի գայ ու խոստովանի անոր Տէր ըլլալը: Ծաղրականօրէն «հրեաներու թագաւոր» կոչեցին Յիսուսը, որ թագաւորն է երկինքին ու երկրին, եւ թագաւորն է թագաւորներուն:

7) «Կը թքնէին անոր երեսին»: Թքնեցին Յիսուսի երեսին, մինչդեռ Յիսուս իր թուքով կոյրերու աչքեր բացաւ: Յուդա համբուրեց Յիսուսի երեսը եւ իր համբոյրով ցաւցուց անոր սիրտը, իսկ զինուորները թքնեցին անոր երեսին եւ իրենց թուքով նախատեցին փառքի Աստուածը: Թքնեցին երեսին Յիսուսի, որ աշխարհ եկած էր Աստուծոյ երեսը ցուցնելու մեզի: Թքնեցին երեսին Յիսուսի, որուն «երեսին առջեւ լեցուն ուրախութիւն կայ» (Սղ 16.11):

8) «Եղէզը ձեռքէն կ'առնէին եւ գլխուն կը զարնէին»: Զարկին գլուխին Յիսուսի, որ գլուխն էր երկնաւոր բոլոր զօրքերուն, եւ որ իր յարութեամբ պիտի դառնար գլուխը Եկեղեցիին: Զարկին այն գլուխին՝ որուն առջեւ դատաստանի օրը բոլոր ազգերն ու ցեղերը իրենց գլուխները պիտի խոնարհեցնեն: Զարկին այն գլուխին՝ որ պիտի ճզմէր Սատանային գլուխը եւ մեզ ալ պիտի դարձնէր անոր ճզմիչները: Զարկին այն գլուխին՝ որ պիտի շտկէր մեղքին դիմաց ծռած մեր գլուխները:

9) «Զայն ծաղրելէ ետք, վրայէն հանեցին քղամիդը եւ հազցուցին իր զգեստները, եւ ապա տարին զայն խաչելու»: Յիսուս Հռոմայեցի զինուորականի մը քղամիդով չէր կրնար խաչուելու տարուիլ: Ան իր հագուստներով պէտք էր տարուէր, որպէսզի զինք խաչող զինուորները վիճակ ձգելով՝ հագուստները իրենց միջեւ բաժնէին, եւ այդ ձեւով իրականանար Դաւիթ մարգարէին խօսքը. «Հագուստներս իրենց միջեւ բաժնեցին եւ իմ վերարկուիս վրայ վիճակ ձգեցին» (Մտ 27.35: Սղ 22.18): Ժողովուրդը կը ճանչնար Յիսուսի զգեստները. ան հետեւաբար իր զգեստներով պէտք էր տարուէր, որպէսզի ամբողջ ժողովուրդին կողմէ տեսնուէր ու ճանչցուէր: Հռոմայեցիներ սովորութիւն ունէին փող հնչեցը-

նելու երբ անձ մը խաչելու պիտի տանէին: Ատիկա կ'ընէին որպէսզի ժողովուրդը տեսնէր ու վախնար եւ երբեք մէկը չմտածէր կայսրին դէմ ապստամբելու: Այս սովորութիւնը պահեցին Յիսուսը Գողգոթա տարած ատեն նաեւ: Չատիկի օրն էր. ուստի մեծ թիւով մարդիկ կային Երուսաղէմ, եւ բոլորը տեսան Յիսուսի տարուիլը Գողգոթա:

Քրիստոսի Չարչարանքներէն Ծնունդ Առած Բարիքները

Տէր Յիսուս Քրիստոս, Խոստովանելիդ ուրացուեցար, որպէսզի ուրացուելու արժանիներս քեզ խոստովանինք եւ ընդունուինք Աստուծոյ կողմէ:

Անքննելիդ հարցաքննուեցար, որպէսզի ազատես մեզ ահաւոր դատաստանին հարցաքննութենէն:

Փառաւորդ անարգուեցար, որպէսզի մեզ քու փառքովդ ծածկես:

Անմահդ մեռար, որպէսզի կենդանացնես մեղքով մեռածներս:

Կենսատուդ անշնչացար խաչին վրայ, որպէսզի խաչովըդ շո՛ւնչ տաս մեղքով շնչահեղձ դարձած մեր հոգիներուն:

Անպատանքելիդ պատանքուեցար կտաւով, որպէսզի մեզ պատես սրբութեան պատանքով:

Անգերեզմանելիիդ գերեզմանը քարով մը կնքուեցաւ, որպէսզի քարացած մեր սիրտերը Սուրբ Հոգիովդ կնքես:

Անապտակելի երեսդ ապտակուեցաւ, որպէսզի ազատես մեր երեսը դատաստանի ամօթէն:

Փառքի Աստուածդ նախատուեցար, որպէսզի աներեւոյթ թշնամիին կողմէ նախատուածներս աստուածային փառքիդ առաջնորդես:

Անմեղդ մեղքի քղամիդով ծածկուեցար, որպէսզի մերկացնես մեզ մեղքի պղծալից հագուստէն, ու ծածկես անմեղութեան զգեստով:

Անկապելիդ կապուեցար, որպէսզի ազատ արձակես մեղքի կապանքներով կապուածներս:

Եկեղեցիին Գլուխը Եղողդ խաչին վրայ գլխիկոր դարձար, որպէսզի ճգմես Չարին գլուխը, եւ որպէսզի մեղքով գլխիկոր դարձածներուս գլուխները վե՛ր բարձրացնես:

Անլռելիդ լռեցուեցար, որպէսզի մենք Աստուծոյ փառաբանութեամբ բանանք մեր բերանները:

Ազատարարդ ձերբակալուեցար, որպէսզի ազատագրես չար ոգիներուն կողմէ ձերբակալուածները:

Օրհներգելիդ անիծուեցար, որպէսզի մեզ օրհնես եւ օրհնութեան զաւակներ դարձնես:

Սուրբդ խաչակից եղար աւազակներու, որպէսզի մեզ դասակից դարձնես երկինքի սուրբ հրեշտակներուն:

Անձաղրելիդ ծաղրուեցար, որպէսզի չար ոգիները ալ չկրնան ծաղրել մեզ:

Սրտի ծարաւը Յագեցնողդ ծարաւցար, որպէսզի մեզ առաջնորդես Կենաց Գետին:

Հոգեպէս մերկերը Հագուեցնողդ մերկացուեցար պատմուճանէդ, որպէսզի ծածկես մեզ սիրոյդ ու սրբութեանդ պատմուճանով:

Անխոցելիդ խոցուեցար, որպէսզի բժշկես խոցերը մեր սիրտերուն:

Անտեսանելիդ անտեսուեցար, որպէսզի մեզ արժանի դարձնես Աստուծոյ տեսութեան:

Կոտրածները Բուժողդ վիրաւորուեցար, որպէսզի բուժես վերքերը մեր կոտրած հոգիներուն:

Արիւնեցան ատամներդ, որպէսզի մենք չկրճտենք մեր ատամները դժոխքի կրակներուն մէջ:

Երկինքի Ջորավարդ յանձնուեցար զինուորներուն ձեռքը, որպէսզի մեզ յանձնես մեր երկնաւոր Հօր ձեռքը:

Թագաւորդ դիմաւորուեցար սրակիր մարդոց կողմէ երբ մահուանդ ժամը հասաւ, որպէսզի մենք դիմաւորուինք բարի հրեշտակներուն կողմէ երբ մահուամբ աւանդենք մեր հոգիները:

Պաշտպանդ անպաշտպան մնացիր, որպէսզի դառնաս մեր պաշտպանը, ընդդէմ մեր հոգիներու թշնամիին՝ Սատանային:

Ջօրքերու Աստուածդ ձերբակալուեցար զինուորներու կողմէ, որպէսզի դիւային զօրքերու կողմէ ձերբակալուածներու ազատութիւն շնորհես:

Քաղցրիդ ու մեր կեանքը Քաղցրացնողիդ դառն քացախ խմցուցին, որպէսզի փարատես մեղքի դառնութիւնը մեր սիրտերէն ու լեցնես մեզ անոյշ սիրովդ:

Շնորհաբաշխդ անշնորհք կերպով տառապեցուեցար, որպէսզի մեզ դարձնես շնորհքի զաւակներ:

Բարերարդ չարչարուեցար, որպէսզի Աստուծոյ բարերարութիւնը հայցես մեզի համար:

Անմեղ մեղաւորի մը նման նախատուեցար, որպէսզի ազատես մեղաւորներս մեղքի նախատիներէն:

Գթառատդ անգութօրէն տանջուեցար, որպէսզի գութի կարօտ մեր հոգիները քեզի վստահին:

Թագաւորդ փշեղէն պսակ ընդունեցիր քու գլխուդ, որպէսզի փրկութեան պսակով զարդարես մեր գլուխները:

Տէրդ ծառայ դարձար ու ծառաներուն ձեռքով ձեռուեցար, որպէսզի Չարին ու մեղքին ծառայ դարձածներս՝ դարձնես Հօրդ, Հոգիիդ եւ Քու ծառաներդ:

Քրիստոսի Ծարաւը

«*Ծարաւ եմ*» (Յհ 19.28): Խաչին վրայ էր Տէրը երբ այս բառերը արտասանեց: Չո՞ւր կ'ուզէր արդեօք. ո՞չ. ի՞նչպէս կրնար ջուր ուզել, երբ ահա իր խաչելութեամբ խաչը կը վերածէր աղբիւր կեանքի: Ուրեմն, խաչը ինքն էր որ պիտի յագեցնէր ծարաւը Քրիստոսի: Այո, ծարաւ մը ունէր Քրիստոս իր սրտին մէջ, եւ այդ ծարաւը իր խաչով պիտի յագեցնէր, որովհետեւ այդ ծարաւը մարդիկը փրկելու ծարաւն էր, մարդիկը իր սրտին մէջ առնելու ու մարդոց սրտին մէջ իր տեղը ունենալու ծարաւն էր, մարդիկը իր մէջ բնակեցնելու ու մարդոց մէջ բնակելու ծարաւն էր, եւ այս բոլորը Քրիստոս խաչով միայն պիտի իրագործէր:

Այս իմաստով, մարդոց հանդէպ Յիսուսի սէ՛րն էր որ ծարաւցուցած էր Յիսուսը: Մարդոց հանդէպ իր կապուածութիւնն էր որ ծարաւցուցած էր զինք: Ուստի երբ «*ծարաւ եմ*» ըսաւ, իր ուզածը նիւթական ջուրը չէր, այլ՝ մարդոց սրտէն բղիսած ապաշխարութեան արցունքը, որով միայն կրնար յագենալ իր ծարաւը: Մտաբերենք ասկէ առաջ արտասանուած իր խօսքը՝ ուղղուած Սամարացի կնոջ. «*Չուր տուր ինձի*» (Յհ 4.7): Դարձեալ, նիւթական ջուր չէր որ կ'ուզէր Յիսուս, այլ՝ փրկութիւնը Սամարացի կնոջ ու բոլոր Սամարացիներուն: Յիսուս նիւթական ջուր ձեռք ձգելէ աւելի՝ Աննիւթական Չուրը կ'ուզէր հրամցնել Սամարացի կնոջ ու անոր բոլոր քաղաքացիներուն, եւ այդպէս ալ եղաւ (Յհ 4.42):

Քով-քովի բերենք Սամարացի կնոջ ուղղած ու խաչին վրայ արտասանած Յիսուսի երկու խօսքերը, եւ մենք կ'ունեն-

նանք անոնց ճիշդ իմաստը. *«Ջուր տուր ինձի...», ծարաւ եւ՛*: Այո՛, ջուր պէտք է տանք ծարաւ Յիսուսի, մեր սրտի՛ ջուրը, մեր հոգիի՛ ջուրը, որովհետեւ մեր սրտի ու հոգիի ջուրով, այլ խօսքով՝ արցունքով միայն Տէրը կրնայ իր ծարաւը յագեցնել: Երբ կը լսենք *«Ջուր տուր ինձի...», ծարաւ եւ՛* բառերը, մեր սիրտերը պէտք չէ՞ ջուրի նման թափին Տիրոջ ոտքերուն առջեւ, անոր ծարաւին յագուրդ տալու համար. պէտք չէ՞ մեր հոգիի ակունքներէն զոջումի ու ապաշխարութեան արցունքի առատ կաթիլներ բղխեցնենք, յագեցնելու համար ծարաւը մեր Ծարաւին՝ Յիսուսի:

Ականջ տանք Տիրոջ *«ծարաւ եւ՛»* կոչին, եւ աշխատինք յագուրդ տալ անոր ծարաւին: Ի՞նչ բանի ծարաւն ունի Տէրը:

Տէրը խաչով իրագործած իր փրկութիւնը մեզի շնորհելու ծարաւն ունի:

Իր արիւնով մեզ Աստուծոյ մօտեցնելու եւ զԱստուած մեզի մօտեցնելու ծարաւն ունի:

Իր արիւնով մեզ Աստուծոյ հետ հաշտեցնելու եւ զԱստուած մեզի հետ հաշտեցնելու ծարաւն ունի:

Իր արիւնով մեր ու Աստուծոյ միջեւ հայր ու որդիի յարաբերութիւնն ու հաղորդակցութիւնն հաստատելու ծարաւն ունի:

Յիսուս մեր ուրախութեան առարկան դառնալու եւ մեզ իր ուրախութեան առարկան դարձնելու ծարաւն ունի:

Յիսուս իր ներկայութեամբ մեզ կշտացնելու եւ մեր ներկայութեամբ կշտանալու ծարաւն ունի:

Յիսուս իր սէրը մեզի շնորհելու եւ մեր սէրը վայելելու ծարաւն ունի:

Յիսուս մեր ուշադրութեան առանցքը հանդիսանալու եւ մեզ իր ուշադրութեան առանցքը դարձնելու ծարաւն ունի:

Յիսուս մարդոց կողմէ հասկցուելու ու փնտռուելու ծարաւն ունի:

Յիսուս մարդոց կեանքին մէջ առաջնահերթ տեղը գրաւելու ծարաւն ունի:

Յիսուս մարդոց կողմէ խոստովանուելու, պաշտուելու, հռչակուելու ու յայտարարուելու ծարաւն ունի:

Յիսուս մեր հոգիին մէջ գտնուող ծարաւը յագեցնելու ծարաւն ունի:

Յիսուս մեր սրտին ծարաւը դառնալու ծարաւն ունի:

Յիսուս մեզ իր շուրջ համախմբուած տեսնելու ծարաւն ունի:

Մեզ իր յաղթող զինուորները իբրեւ տեսնելու ծարաւն ունի:

Մարդոց միջեւ սէր ու համերաշխութիւն տեսնելու ծարաւն ունի:

Մեր ծրագիրներուն, փափաքածներուն ու սիրածներուն մէջ առաջնահերթ տեղը գրաւելու ծարաւն ունի:

Մեր կեանքին երազն ու նպատակը դառնալու ծարաւն ունի:

Մեր մէջ ու մեր միջոցաւ գործելու եւ մեզ իր գործակիցները դարձնելու ծարաւն ունի:

Ան մարդոց հետ մտերմութիւն հաստատելու ծարաւն ունի:

Ան մարդիկը մեղքի անարգանքէն ազատելու ու զանոնք իր երկնային փառքով պսակելու ծարաւն ունի:

Ան կորսուածը գտնելու ու կորսուածին կողմէ գտնուելու ծարաւն ունի:

Միրելի ընթերցող, կեանքը չէ՞ յոգնեցուցած քեզ, հանգիստդ գտնելու ծարաւ չունի՞ս: Եկո՛ւր Կենաց Գետին, որ

քու անձիդ համար եւ քու անձիդ ծարաւցաւ, եւ ըմպէ Անկէ,
որպէսզի յագեցնես ծարաւը սրտիդ, եւ սիրտդ դառնայ կեն-
սատու ջուրի գետեր բղխեցնող մշտացայտ աղբիւր (Յհ 7.38):

Տիրոջ Ուղղուած Սրտի Խօսք

Տէր Յիսուս, կ'օրհնաբանեմ անունդ որ անիծաբանուեցաւ ինծի համար: Անունդ՝ որ օրհնութիւնն էր երկինքի ու երկրի, դարձաւ անեծք՝ երկինքն ու երկիրը օրհնաբեր հաշտութեամբ մը հաշտեցնելու համար:

Ինչպէս չմեծարեմ քեզ՝ մեծ Տէրդ, մեծերու տիրոջդ, փառքի թագաւորդ, փառաւոր թագաւորդ, որ հրաժարեցար ամէն տեսակի մեծափառութիւններէ՝ զիս մեծ փառքիդ առաջնորդելու համար:

Դուն որ փառքի տէրն ես եւ տիրող փառքը, ինչպէս պատահեցաւ որ փառքդ թողուս, փառքէդ հեռացա՞ծս փառքիդ մօտեցնելու ու փառքովդ զարդարելու համար, մի՛ շտ ու մի՛ այն քո՛ւ փառքիդ համար:

Ինծի համար խաղաղարարդ՝ խռովեցար, երջանկատուդ՝ տրտմեցար, անմահդ՝ մահացար, բարձրեալդ՝ խոնարհեցար, Տէրդ՝ ծառայ եղար, դատաւորդ՝ դատապարտեալ, օրհնեալդ՝ անիծեալ, աղբիւրդ՝ ծարաւցար, արձակիչդ՝ կապուեցար, անհպելիդ՝ ձեծուեցար, խոցերը բուժողդ՝ խոցուեցար: Զարմանալիիդ ու զարմացնողիդ չարչարանքներէն ո՞ր մէկը յիշեմ եւ ինչպէս պատկերեմ:

Ինչպէս պատահեցաւ որ ծունկի եկար աղօթելու (Ղկ 22.41), դուն՝ որուն դիմաց երկնաւորները, երկրաւորները եւ սանդարամետականները օր մը ծունկի պիտի գան (Փլպ 2.10):

Ի՞նչպէս եղաւ որ խնդրես կամքը Հօր Աստուծոյն (Ղկ 22.42), երբ աշխարհն ամբողջ կ'աղաչէ կամքն Աստուծոյդ (Ա.Յհ 5.14):

Ի՞նչպէս պատահեցաւ որ մեծապէս զօրաւորդ եւ ամենքը զօրացնողդ (Ես 40.29-31), հրեշտակէ մը զօրացուելու կարօտ ըլլաս (Ղկ 22.43):

Ի՞նչպէս եղաւ որ արծաթով ծախուիս (Մտ 26.15), դո՛ւն՝ որ թանկագին արծաթն ու աննիւթական ոսկին ես (Յոբ 22.25), դո՛ւն՝ որ աներեւակայելի գանձն ես (Եփ 3.8):

Ի՞նչպէս պատահեցաւ որ լուռ ու մունջ կանգնիս Պիղատոսի առջեւ (Մտ 27.14), դո՛ւն՝ որ քեզմէ են խօսելու ու բարբառելու կարողութիւնները (Ել 4.11):

Ի՞նչպէս պատահեցաւ որ կեանքդ աշխարհէն վերցուի (Ես 53.8), դո՛ւն՝ որ կեանքն ես աշխարհին (Ա.Յհ 5.11-12):

Ի՞նչպէս եղաւ որ դարձար անպաշտպան ոչխար (Ես 53.7), դո՛ւն՝ որ հետեւորդներուդ պաշտպան առիծն ես (Յյտ 5.5: Ես 31.4: Ծն 49.9):

Ի՞նչպէս եղաւ որ օրհնեալդ ու փառաւորեալդ փոխանակ օրհնաբանական ու փառաբանական բացազանչութիւններով դիմաւորելու, սուրերով ու բիրերով դիմաւորեն (Ղկ 22.52):

Ի՞նչպէս պատահեցաւ որ խաչիդ հետեւող բազմահազար մարդոց մէջէն միայն մէկ հոգի, այն ալ աւազակ մը, քեզի համար վկայութիւն տար ըսելով. *«Ասիկա գէշ բան մը չէ ըրած»* (Ղկ 23.41):

Ի՞նչպէս եղաւ որ կանգնիս երկրաւոր քահանայապետի մը առջեւ հարցաքննուելու համար անկէ (Յհ 18.19), դո՛ւն՝ որ երկնաւոր քահանայապետն ես (Եբր 4.14):

Ի՞նչպէս պատահեցաւ որ մեռցնեն քեզ (Գրծ 3.15), դո՛ւն՝ որ մեռցնելու իշխանութիւնը ունիս (Ա.Թգ 2.6):

Ի՞նչպէս եղաւ որ աննինջ Աստուծոյդ (Սղ 121.4) ժայռափոր գերեզմանի մը մէջ դնեն (Մտ 27.59), դո՛ւն՝ որուն հրամանով մեռելները իրենց գերեզմաններէն դուրս պիտի գան (Յհ 5.28-29):

Ի՞նչպէս եղաւ որ մերկացնեն քեզ պատմութեանդ (Մտ 27.28), դո՛ւն՝ որ պարգեւողն ես լաւագոյն պատմութեանը (Ղկ 15.22):

Ի՞նչպէս եղաւ որ բռունցքի հարուածներով այլափոխեն կերպարանքդ (Ես 53.2), դո՛ւն՝ որ աստուածային կերպարանքիդ համաձայն ստեղծեցիր մեզ (Մն 1.26-27):

Ի՞նչպէս պատահեցաւ որ սպասաւորէ մը ապտակուիս (Յհ 18.22), դո՛ւն՝ որ հրեշտակներէ կը սպասաւորուիս (Մտ 4.11):

Ահաւոր բան է մեղքը: Մեղքը՝ որ մարդս կը յանդգնեցնէ անօրէնութեամբ թարախոտած եւ անարդարութեամբ ցեխոտած ձեռք մը երկարել սրբափայլ եւ մաքրամաքուր երեսիդ:

Մարդիկ պատերազմական մեքենաներով ազատութիւն ձեռք կը ձգեն, մինչ դուն, Տէր, այդ բոլորը ձեռք ձգեցիր գամով ու փուշով:

Մարդիկ իրենց կեանքը ապահովելու համար ուրիշներուն կեանքը կը խլեն, մինչ դո՛ւն, ո՛չ թէ կեանքդ փրկելու համար ուրիշին կեանքը խլեցիր, այլ՝ ուրիշին կեանքը փրկելու համար՝ քու կեանքդ զոհեցիր:

Մարդիկ քեզ փնտռեցին որպէսզի սպաննեն քեզ (Մտ 2.13), մինչ դուն մեզ կը փնտռես՝ փրկելու համար մեզ (Ղկ 19.10):

Մարդիկ երեսիդ թքնեցին (Մր 14.65), մինչ դուն թուքովրդ անոնց աչքերը բացիր (Յհ 9.6):

Եւ տակաւին,

Բժիշկիդ՝ դուն քեզ բժշկէ ըսին (Ղկ 4.23):

Սրբազնասուրբիդ՝ դեւերով բնակուած կոչեցին (Յհ 8.48):

Սուրբ Հոգիով հրաշագործողիդ՝ Բէկոգերուդով կը հրաշագործէ հաստատեցին (Մտ 12.24):

Աստուծմէ եւ Աստուած եղողիդ (Տիտ 2.13), այս մարդը չի՛ կրնար Աստուծմէ ըլլալ յայտարարեցին (Յհ 9.16):

Միակ անմեղդ (Յհ 8.46: Եբր 4.15: Ա.Յհ 3.5) եւ մեր մեղքերը քաւողդ (Եփ 1.7: Կդ 1.14: Ա.Յհ 1.7, 2.2), մեղաւոր կոչեցին (Յհ 9.24):

Հրեշտակապետներն ու հրեշտակները, սուրբերն ու արդարները իբրեւ բարեկամ ճանչցողդ՝ (Յհ 15.14-15) մաքսաւորներու եւ մեղաւորներու բարեկամ անուանեցին (Ղկ 7.34):

Միակ առաջնորդդ (Մտ 23.10), մոլորեցնող նկատեցին (Ղկ 23.2):

Խաղաղութեան եւ արդարութեան հրաւիրողդ՝ ըմբոստութեան կը մղէ ըսին (Ղկ 23.5):

Ամէն տազնապող սրտի պատասխանը եղողիդ (Մտ 11.28) եւ ամէն կանչողի պատասխան տուողիդ (Սդ 91.15: Եր 33.3)՝ *«այդպէ՛ս կը պատասխանես քահանայապետին»* հարց տուին (Յհ 18.22):

Ամենագէտիդ՝ *«գիտցի՛ր, ո՞վ է քեզի զարնողը»* հարցուցին (Ղկ 22.64):

Միակ բարիդ ու բարերարդ (Սդ 119.68)՝ չարագործ կոչեցին (Յհ 18.30):

Ամենիշխանիդ ու ամեն տեսակի իշխանութիւն տուողիդ՝ «չէ՞ս գիտեր թէ իշխանութիւն ունիմ քեզ խաչը հանելու» հարցուցին (Յհ 19.10):

Ազատարարիդ՝ «դուն քեզ ազատէ» պոռագին (Մտ 27.40):

Ճշմարիտն ու ճշմարտութիւնը եղողիդ համար (Յհ 14.6)՝ սուտ վկայութիւն տուին (Ղկ 23.5):

«Դուք էք անոր աշակերտները» (Յհ 9.28) ըսին, որպէս թէ մեծ ուսուցիչիդ աշակերտիլը մեծ նախատինք ըլլար:

Տէ՛ր, նախընտրելի է հետեւիլ մեր նախատինքը մեր վրայէն վերցուցած նախատուած Փրկիչիդ, քան մեզ նախատող եւ քու ու մեր նախատինքը եղող Սատանային:

Տէ՛ր, զիս տեսնելու համար չէ՛ր որ ամենատեսղ անտեսուեցար: Ջիս արդարացնելու համար չէ՛ր որ արդարդ եւ արդարացնողդ անարդարօրէն չարչարուեցար: Սիրտս սիրովդ լեցնելու համար չէ՛ր որ թոյլ տուիր որ սուր մը անցնի սրտէդ: Ջիս կեանքովդ լեցնելու եւ կեանքիդ հարազատ նմանութիւնը դարձնելու համար չէ՛ր որ կենդանիդ ու կենդանացնողդ մահացար:

Ինչո՞ւ քեզ չընդունիմ կեանքիս մէջ եւ իբրեւ իմ կեանքս, երբ դուն զիս ընդունելու համար համբերեցիր անհամբերելի տառապանքներու, եւ ինծի ներելու համար հանդուրժեցիր անհանդուրժելի տանջանքներու: Քու կրած չարչարանքներէդ, որ իմս էին ու սեփականացուցիր, ո՞ր մէկին մասին գրեմ: Ո՞վ կրնայ պատմել կրած անկրելի վիշտերուդ ու չարչարանքներուդ մասին:

Անօրէնս խոտորեցաւ՝ օրէնսդիդ ծեծուեցար: Խաւարաբնակս խարխափեց՝ արեգակդ մարեցար: Անձս չարացաւ՝ անձդ չարչարուեցար: Ծառաս մեղանչեց՝ Տէրդ խաչ-

ուեցար: Աշխարհի մեջ լսուա՞ծ բան է որ տէր մը յանձն առնէ իր ծառային փոխարէն ու անոր մեղքին պատճառով մեռնիլ: «Հազիւ թէ գտնուի մէկը որ յանձն առնէ արդարի մը համար մեռնիլ» (Հո 5.7): Տէր Յիսուս, մենք արդար չէինք երբ մեզի համար մեռար, այլ՝ անարդար, եւ ո՛չ միայն անարդար, այլեւ՝ քեզի թշնամի (Հո 5.10): Ո՞ր բժիշկը իր հիւանդը առողջացնելու համար յանձն կ'առնէ անոր փոխարէն մեռնիլ: Ո՞ր զօրավարը իր դաւաճան զինուորին փոխարէն յանձն կ'առնէ կախադան բարձրանալ: Դո՛ւն եղար այդ բժիշկն ու զօրավարը որ սիրայօժար կերպով յանձն առաւ հիւանդներու եւ դաւաճաններու փոխարէն մեռնիլ:

Կ'ապշահարի մարդկային միտքը երբ ուզէ ճառել անճառելիիդ մասին: Անհունդ հունի մեջ մտար՝ հունաւորս անհունութեան որդի դարձնելու համար: Տէրդ ծառայ եղար՝ ծառայ եղածս տիրող ընելու համար: Ամենախնամդ խնամքի պէտք ունեցար՝ խնամքի կարօտ հոգիս խնամելու համար: Անկարօտդ օգնութեան կարօտ եղար՝ քեզի կարօտցածիս օգնելու համար:

Իմ մեղքերուս համար եղան այս բոլորը: Մեղքս եղաւ անցանկալի թուք՝ բոլորին ցանկութիւնը եղող դէմքիդ վրայ: Եղաւ ապտակ երեսիդ վրայ՝ որուն դիմաց երկինք ու երկիր կը սարստան: Եղաւ բռունցք՝ անայլայլ դիմագիծդ այլայլող: Եղաւ հարուած՝ ամենատես եւ ամենաթափանց աչքերդ ուռեցնող: Եղաւ գաւազան՝ իշխանիդ ձեռքին իջնող: Եղաւ ցեխ՝ երկինքի մաքուր ցօղդ պղտորող:

Մեղքս եղաւ մոխիր՝ սիրոյ կրակով լեցուն սրտիդ բաղխող: Եղաւ քրտինք՝ բոլորին քրտինքը սրբող անձիդ համար: Եղաւ արեան շիթ՝ մեծ Աստուծոյդ համար, որ մեծ հաշուակալն ես հեղուած ու հեղուելիք բոլոր արիւններուն:

Մեղքս եղաւ մեխ՝ ամենաշարժդ եւ մշտաշարժդ անշարժացնող: Եղաւ լեղիով խառն գինի՝ ամէն բան քաղցրացնողիդ եւ ամէն բանի քաղցրութիւնը եղողիդ համար: Եղաւ փշապսակ եւ փոխան թագի դրուեցաւ թագաւորիդ գլխուն վրայ:

Տէ՛ր, պատմութեան ընթացքին ո՞ր երկրաւոր թագաւորը փոխան թագի փշապսակ կրած է: Իսկ դո՛ւն, որ թագաւորն ես երկինքի ու երկրի, թագաւորն ես բոլոր թագաւորներուն ու թագաւորութիւններուն, ի՞նչպէս պատահեցաւ որ փուշս իբրեւ վարդեպսակ ընդունիս:

Միբե՛լի Տէր Յիսուս, մեզի յայտնեցիր որ հոգիդ մեռնելու աստիճան տրտում էր (Մտ 26.37-38): Հոգեպէս խռովեցար երբ բացայայտեցիր որ աշակերտներէդ մէկը քեզ պիտի մատնէ (Յհ 13.21): Ո՞վ կրնայ ըմբռնել անըմբռնելիիդ խռովիլը: Ո՞վ կրնայ բացատրել երջանիկիդ տրտմիլը եւ երջանկացնողիդ տրտմութիւնը: Ո՞վ կրնայ հասկնալ խաղաղութեան իշխանիդ (Ես 9.6) եւ խաղաղութիւն տուողիդ (Յհ 14.27) տագնապիլը:

Միթէ՛ դուն չե՞ս երջանկութիւն պարգեւողն ու պարգեւուած երջանկութիւնը: Դուն չե՞ս քուկիններուդ սրտին մէջ իշխող խաղաղութիւնը: Երբ աշխարհ եկար՝ խաղաղութիւն բերիր քեզի հետ (Ղկ 2.14), եւ երբ աշխարհէն պիտի մեկնէիր՝ խաղաղութիւնդ մեզի շնորհեցիր (Յհ 14.27): Ահա դուն որ երկինքի ու երկնաւորներու ուրախութիւնն էիր, երկիր իջար ուրախութիւնդ փոխանակելու եւ ուրախդ փոխանակուելու մեղքիս պատճառած տրտմութեամբ:

Երկինքը երկնաւորիդ մահը տեսնելով սեւով ծածկուեցաւ ու սուգ պահեց (Մր 15.33): Քու ստեղծած բնութիւնդ

քեզի խաչակից եղաւ: Կարելի՞ քան է ուրախութեան ակը եղողիդ համար սուգ պահել ու լոյսիդ համար խաւարիլ:

Երկնայիններ զարհուրեցան երբ տեսան գլուխիդ խոնարհիլը խաչին վրայ: Ի՞նչպէս մահուամբ գլուխդ խոնարհեցուցիր, դո՛ւն՝ որուն դիմաց օր մը ամբողջ աշխարհը իր գլուխը պիտի խոնարհեցնէ (Փլպ 2.10-11):

Ննջած մարգարէներն ու նահապետները, սուրբերն ու արդարները, տեսնելով մեծիդ մեծապէս չարչարուիլը, աշխարհը շակոյղիդ խաչին կողմէ շակուիլը, արդարիդ անարդարօրէն ցաւցուիլը եւ իրաւատերիդ ու իրաւունք ընողիդ անիրաւօրէն անիրաւուիլը՝ դառնօրէն ողբացին եւ մեծապէս թողացին: Ո՛հ Տէր, երկնայիններ ու երկինք չարչարակից եղան քեզի, մինչ ես՝ անտարբերս, նախընտրեցի անտարբեր մնալ ամէն իմաստով եւ ամէն բանէ տարբեր եղողիդ հանդէպ:

Միբելի Տէր Յիսուս Քրիստոս, քու խաչելութիւնդ սիրող սրտի մը խաչելութիւնն էր: Միրազեղ սիրտդ էր որ արիւնեցաւ եւ կը շարունակէ արիւնիլ խաչին վրայ: Չեմ հասկնար եւ պէտք ալ չունիմ հասկնալու խաչելութեանդ խորին խորհուրդը, բայց, Տէ՛ր, կը հաւատամ որ ան ինծի եւ բոլոր մարդոց համար եղած խաչելութիւն մըն էր, մեզ փրկելու համար յաւերժ կորուստի մը տանջահար խաչելութենէն: Եւ այդ հաւատքով խաչիդ ոտքին կը դիմեմ ու փրկութիւն կը հայցեմ:

Քրիստոսի Խաչելութիւնը

Քրիստոսաբանութեան մեջ կան երեք գլխաւոր խորհուրդներ.-

Քրիստոսի ծնունդը:

Քրիստոսի խաչելութիւնը:

Քրիստոսի յարութիւնը:

Քրիստոսի խաչելութեան խորհուրդէն բխող քանի մը մտածումներ կը բաժնենք ձեր հետ.-

1) Առաջին հերթին եւ ամէն բանէ առաջ, Քրիստոսի խաչելութեան խորհուրդը՝ սիրոյ խորհուրդն է: Քրիստոս չխաչուեցաւ պարզապէս մեզ փրկելու, այլ խաչուեցաւ՝ որովհետեւ սիրեց ու կը սիրէ մեզ: Ճիշդ է որ հրեայ ղեկավարներ աստելութենէ մղուած խաչել տուին զինք, եւ սակայն, անոնց աստելութիւնը չէր որ խաչ բարձրացուց Տէրը, այլ՝ Տիրոջ մարդասիրութիւնը: Հրեաներ չէին կրնար խլել կեանքը «եւ եւ կեանքը» յայտարարող Տիրոջ: Տէրը իր ազատ կամքով իր կեանքը զոհեց (Յհ 10.18), եւ ճիշդ ասոր մեջ կը կայանայ Տիրոջ սէրը. ազատ կամքի արտայայտութիւնը եղող սէրն է իսկական սէրը, եւ ասիկա զոհուող սէրն է, ինքզինք ընծայաբերող սէրն է. արդարեւ, ճշմարիտ սէրը կը զոհուի ու բնաւ չի զոհեր: Այդպիսին էր Յիսուսի սէրը. ան իբրեւ մեր Աստուածն ու արարիչը, ամէն իրաւունք ունէր զոհելու մեզ, պատժելու մեզ, դատապարտելու մեզ, որովհետեւ մենք կոտրած էինք ոչ միայն իր օրէնքները, այլ նաեւ իր սիրտը, եւ մերժած էինք ոչ միայն իր կամքը, այլեւ զինք: Բայց Տէրը մեր մերժումին դիմաց մերժում չցուցաբերեց,

որովհետեւ սէրը չի մերժեր, այլ մերժուածը կ'ընդունի, եւ Տէրը ընդունեց մեզ, գրկաբա՛ց ընդունեց, եւ ասիկա վաւերացնելու ու ապացուցանելու համար էր որ խաչ բարձրացաւ, ու խաչին վրայ գրկաբաց գամուեցաւ: Այսօր, բոլոր անոնք որոնք կարիքը ունին սիրոյ ու գուրգուրանքի՝ թող դիմեն գրկաբաց Խաչեալին. բոլոր անոնք որոնք սէր ակնկալած են աշխարհէն ու յուսախաբ եղած են՝ թող նետուին գրկին մէջ Խաչեալին. բոլոր անոնք որոնք սէր փնտռած են իրենց հարազատներուն մօտ ու չեն գտած՝ թող ձեռք երկարեն իրենց ճշմարիտ հարազատին՝ Քրիստոսի, որուն սէրը ջինջ ու անկեղծ է, եւ չ'անցնիր ժամանակին հետ՝ որովհետեւ անիկա ժամանակը անդրանցնող սէր է, ու չի փոխուիր պայմաններու փոխուելուն հետ՝ որովհետեւ անիկա անփոփոխ սէր է:

2) Քրիստոս իր խաչելութեամբ պարտութեան մատնեց Չարը իր բոլոր արբանեակներով: Տէրը խաչին վրայ գամուեցաւ, եւ իր գամուելովը խաչին վրայ՝ գամեց Սատանան: Որպէսզի մենք կարենանք գամել Սատանան եւ զինք շնչահեղձ դարձնել մեր կեանքին մէջ՝ պէտք է ամէն օր ժամանակ անցնենք խաչին վրայ գամուած Խաչեալին դիմաց: Խաչեալին դիմաց աղօթքով ժամանակ անցնող մա՛րդը միայն կրնայ Սատանային դէմ դնել: Խաչեալին ու անոր խաչին կապուող մա՛րդը միայն կրնայ կապել Չարին ձեռքերը եւ թոյլ չտալ որ ան գործէ իր կեանքին մէջ: Խա՛չն է խանգարիչը Սատանայի գործերուն եւ խափանիչը անոր խորհուրդներուն: Ուստի, ամո՛ւր բռնենք խաչը ու ամո՛ւր կառչինք Խաչեալին, որպէսզի Չարը անկարող ըլլայ բռնելու մեզ մեղքի ուրկանով:

3) Քրիստոս իր խաչելութեամբ ու խաչի սուրով պատ-
ռեց մեր մեղքերու պարտամուրհակը, եւ խաչի գրիչով մեր
անունները գրեց կեանքի Գիրքին մէջ:

Մեղքի լուծին տակ հիւծած ու անոր բեռան ներքեւ
ընկճուած էր մարդը, երբ առատագութ Տէրը որոշեց այդ
լուծն ու բեռը իր վրայ առնել եւ խաչ բարձրանալ, եւ խաչով
ու խաչին վրայ զանոնք լուծել ու վերջացնել:

Մեղքի խորխորատն էր ինկած մարդը. Քրիստոս իր
խաչը դարձուց այն աստիճանը, որով մարդը կարող պիտի
ըլլար բարձրանալու եւ դուրս գալու այդ խորխորատէն:

Մեղքը մեռցուց մարդուն հոգին ու ինք մնաց անմահ.
Քրիստոս սակայն իր խաչով մեռցուց մեղքը ու մարդը դար-
ձուց անմահ: Այո՛, խաչը մահուան առաջնորդեց մեղքը, եւ
կեանքի՝ մարդը:

Քրիստոսի խաչելութեան խորհուրդին առջեւ կանգնած,
եկէք որոշում առնենք ասելու մեղքը՝ որ պատճառ դարձաւ
որ մեր սիրելի Տէրը զինք աստղներուն ձեռքը իյնայ: Հեռա-
նա՛նք մեղքէն՝ որ մեզ կը հեռացնէ Աստուծմէ: Մերժե՛նք
մեղքի սէրը՝ որ մեզ կը դատարկէ Աստուծոյ սէրէն: Բաժնը-
ուի՛նք մեղքի տունէն՝ որ մեզ կը բաժնէ մեր երկնային տու-
նէն: Անողո՛րս գտնուի՛նք մեղքին հանդէպ՝ որ մեզ կը զրկէ
Աստուծոյ ողորմութենէն ու ենթակայ կը դարձնէ Աստուծոյ
անողորմ դատաստանին: Փակե՛նք մեր սիրտը մեղքի մու-
րին դիմաց՝ որով կը տգեղնայ մեր հոգին, եւ բացուի՛նք
խաչի լոյսին դիմաց՝ որով կը գեղեցկանայ մեր հոգին: Ար-
դարեւ, կարող կ'ըլլանք մեղքին տգեղութիւնը հանդէս բերել
միայն այն ատեն, երբ հանդէս բերենք Քրիստոսի արիւնով
լուացուելու գեղեցկութիւնը:

4) Քրիստոս իր խաչելութեամբ ոչ միայն խորտակեց գլուխը մեր թշնամիին՝ որ Սատանան է, ոչ միայն սրբեց ու վերցուց անոր պտուղը՝ որ մեղքն է, այլ նաեւ քանդեց անոր տունը՝ որ դժոխքն է:

Տէրը իր խաչով քանդեց Սատանային տունը՝ դժոխքը, մարդիկ սակայն դժբախտաբար իրենց մեղքի աղիւսներով վերականգնեցին զայն:

Տէրը իր խաչին բանալիով բացաւ դժոխքին դուռը եւ գնաց քարոզեց հոն բանտարկուած հոգիներուն (Ա.Պտ 3.19, 4.6). *«Քարոզեալ հոգւոցն՝ աւերեալ գդժոխս՝ եւ ազատեալ զհոգիս»:*

Դժոխքը դժոխքի վերածողը անմար կրակը չէ, ո՛չ ալ հոն գտնուող անմահ որդերն ու խայթող օձերն են, այլ Յիսուսի բացակայութիւնը հոն: Արդարեւ, հոն ուր Յիսուս է անոր սէրը չկան՝ հոն է դժոխքը:

Մենք պէտք է կռուինք մեղքին դէմ ու մերժենք անոր հետ գործակցիլ, ո՛չ թէ որպէսզի դժոխք չերթանք, եւ ո՛չ թէ որովհետեւ տանջանք կայ հոն, այլ՝ որովհետեւ աստիկա յաւերժապէս մեզ կը գրկէ Յիսուսի սիրալիր ներկայութենէն: Պօղոս առաքեալ մեզի ցոյց կու տայ, թէ բոցավառ կրակն ու յաւիտենական մահուամբ պատժուիլը՝ Տիրոջ ներկայութենէն զրկուիլն է (Բ.Թս 1.8-9):

5) Խաչին դերը միայն Սատանան պարտութեան մատնելը, մեր մեղքերը սրբելը եւ դժոխքը խորտակելը չէ, ինչպէս նշուեցաւ նախորդ երեք կէտերուն մէջ, այլ՝ Աստուծոյ ու մարդուն միջեւ հայր եւ զաւակի յարաբերութիւնը վերականգնելը: Արդարեւ, Յիսուս իր խաչելութեամբ վերականգնեց Աստուծոյ ու մարդուն միջեւ հայր եւ զաւակի անկեղծ ու ջերմ յարաբերութիւնը: Իր խաչին միջոցաւ էր, որ ան քաւեց

մեր մեղքերը եւ մեզ Աստուծոյ որդեգիր զաւակները դարձուց, եւ զԱստուած՝ մեր հայրը: Եւ արդեօք ասոր համար չէ՞ր որ Աստուած մեզ ստեղծեց. Աստուած աշխարհի դատարկութիւնը լեցնելու համար չէր որ ստեղծեց մարդը. ո՛չ ալ զայն ստեղծեց որովհետեւ ինք մինակ էր կամ մինակ կը զգար. այլ զայն ստեղծեց՝ որպէսզի անիկա զաւակ ըլլայ իրեն, եւ ինք հայր ըլլայ անոր: Աստուած մարդը ստեղծեց, որպէսզի իր սէրը հեղու անոր վրայ, եւ միաժամանակ՝ վայելէ անոր սէրը: Մարդուն մեղանշումէն ետք, Աստուծոյ եւ մարդուն հայր եւ զաւակի սիրոյ այդ կապը դադրեցաւ. Քրիստոս իր խաչելութեամբ այդ կապը վերահաստատեց: Այդ կապը երկինքի մէջ չէ որ պիտի սկսի կամ հաստատուի: ԶԱստուած երկինքի մէջ վայելելէ առաջ նախ զայն երկրի վրայ պէտք է վայելենք: Երկինք փոխադրուելէ առաջ՝ նախ երկինքը պէտք է մեր քով փոխադրենք ու զայն զետեղենք մեր սրտին մէջ: Այո՛, սիրելիներ, Աստուծոյ հետ մեր յարաբերութիւնը երկինքի մէջ չ'ըսկսիր, այլ կը սկսի երկրի վրայ, եւ կը շարունակուի երկինքի մէջ:

6) Քրիստոսի խաչելութեամբ՝ խաչը դարձաւ կենսապարգեւ ծառ:

Խաչը եղաւ կեանքի եւ մահուան նշան. կեանքի նշան՝ կեանքի կարօտ մարդկութեան, եւ մահուան նշան՝ կեանքի թշնամի Սատանային համար:

Խաչը որ մեղաւոր կեանքի մը աւարտը հաստատող նշան մըն էր, Քրիստոսի խաչելութեամբ, նոր ու յաղթական կեանքի մը սկիզբը հաստատող նշան մը եղաւ:

Խաչը որ մահապարտ կեանքի մը դժբախտ աւարտն էր, Քրիստոսի խաչելութեամբ, դարձաւ մահապարտ կեանքի մը երջանկաբեր սկիզբը:

Խաչը կեանքի դէ՛կ է. այդ դեկին հետեւելով միայն կըրնանք անմոլար թեւակոխել երկինք:

Խաչը մարդոց յանձնուած Աստուծոյ զէ՛նքն է. այդ զէնքն՝ վ միայն կրնանք պարտութեան մատնել Չարը:

Խաչը երկնային քաւարա՛ն է. միայն անով մեր կեանքէն կրնայ վերցուիլ մեղքի մուրը եւ սրբուիլ յանցանքի տիղմը:

7) Քրիստոսի մարմինին խաչելութիւնը պէտք է ըլլայ մեր իսկ մարմիններուն խաչելութիւնը: Քրիստոսի մարմինին մէջ ոչինչ կար մարմնաւոր, ոչինչ կար աշխարհիկ, ոչինչ կար տկար: Ան այս շնորհքը ուզեց մեզի ալ տալ: Ան իր մարմինին խաչելութեամբ, ուզեց սպաննել մեր մարմիններուն մէջ մարմնաւորը, աշխարհիկը, եւ մեր մարմիններուն յատուկ տկարութիւնները, եւ կամ՝ ուզեց օգնել մեզի որ մենք ընենք ատիկա:

Պէտք է միշտ յիշենք, որ Յիսուս իր խաչելութեամբ փրկեց ոչ միայն մեր հոգիները, այլեւ՝ մեր մարմինները: Իր հոգին փրկել ուզող մարդը՝ պէտք է աշխատի իր մարմինը փրկել աշխարհիկ ու մարմնաւոր ցանկութիւններէ՝ զանոնք խաչին վրայ գամելով: Եթէ մէկը կ'ուզէ ճշմարտապէս հոգեւոր եւ սուրբ կեանք ապրիլ, պէտք է իր մարմինը՝ իր բոլոր ցանկութիւններով ու փափաքներով, իր բոլոր զգացումներով ու զգայութիւններով մեռցնէ խաչին վրայ:

Աստուծոյ Որդին թէեւ մարմնացաւ ու մարդեղացաւ, եւ սակայն, ինչպէս հաստատեցի, իր մարմինին մէջ մարմնաւորը, այլ խօսքով՝ մարդուն յատուկ տկարութիւնները չկային: Որովհետեւ, եթէ մարդկային տկարութիւններ ունենար, խաչին վրայ պիտի չըսէր՝ *«Հա՛յր, ներէ՛ անոնց, որովհետեւ չեն գիտեր թէ ի՛նչ կ'ընեն»* (Ղկ 23.34): Այս խօսքը տկար մարդու խօսք չէ, մարմնաւոր մտածելակերպ ունեցող

մարդու խօսք չէ: Այս խօսքը՝ իր մարմինին մէջ՝ մարմնաւորը սպաննած մարդու խօսք է: «Մարմին»ը չ'ուզեր ներել զինք խաչողներուն, զինք ծաղրողներուն ու քամքասողներուն, զինք չարչարողներուն ու հալածողներուն: Յիսուս սակայն ներե՛ց, որովհետեւ ան երբեք չապրեցաւ մարմնաւոր կեանք, չհնազանդեցաւ մարմնի կամքին, ընդհակառակը, իր մարմինն էր որ հնազանդեցուց Աստուծոյ կամքին: Յիսուս իր այս վերաբերմունքով սորվեցուց մեզի, որ խաչենք մեր մարմիններուն կիրքերը: Պօղոս առաքեալ կը խօսի մարդկային մեր կիրքերն ու ցանկութիւնները խաչին վրայ մահացնելու մասին (Գղ 5.24): Առանց այս ընելու մենք չենք կրնար ներել մեզ չարչարողներուն: Արդարեւ, մենք Յիսուսի նման կրնա՛նք ներել՝ մեզի ներել չուզողներուն ու մեզ իրենց կծու խօսքերով խաչողներուն: Կրնա՛նք կեանք ցանկալ մեզի համար մահ ցանկացողներուն: Այո՛, կրնա՛նք, եթէ երբեք սորվինք Յիսուսէն ու Յիսուսի նման, մեր մարմինները խաչին յանձնել:

8) Քրիստոս իր խաչելութեամբ իրեն հասնելու ճամբան ցոյց տուաւ, եւ այդ ճամբան իր իսկ խաչն է: Ասոր ամենէն գեղեցիկ ապացոյցը՝ աւազակին եւ իր միջեւ տեղի ունեցող երկխօսութիւնն է: Խաչին վրայ էր աւազակը երբ իր աղաչանքը ուղղեց իրեն պէս ու իրեն համար խաչուած Փրկչին. *«Տէ՛ր, յիշէ՛ զիս, երբ քու թագաւորութեամբդ գաս»*: Եւ անոր Տէրն ու Փրկիչը պատասխանեց անոր. *«Վստահ եղի՛ր, այսօր ինձի հետ պիտի ըլլաս դրախտին մէջ»* (Ղկ 23.42-43): Աւազակը խաչին միջոցաւ էր որ դիմեց խաչուած Խաչեալին, եւ խոստում ստացաւ անկէ՝ նոյն օրն իսկ դրախտին մէջ ըլլալու անոր հետ: Տէրը ցոյց տուաւ ու աւազակը սորվեցուց մեզի, թէ անոնք որոնք կ'ուզեն դրախտ մտնել իրենց մահէն

ետք, եւ արքայութիւն մտնել Տիրոջ երկրորդ գալուստէն
ետք՝ պէտք է խաչին միջոցաւ Խաչեալին դիմեն: Աւագակը
խաչուելուն համար չէր որ դրախտ մտաւ, այլ՝ Խաչեալին
հաւատալուն համար, զայն Տէր ու Թագաւոր ճանչնալուն
համար, բայց ատիկա կատարեց իր խաչուած վիճակին մէջ:
Մենք կրնա՞նք հաւատալ Խաչեալ Յիսուսին երբ խաչուած
վիճակի մէջ ենք: Պատրա՞ստ ենք աւագակին նման խաչ-
ուելու Յիսուսի պէս, հաւատալով որ ա՛յս է Տիրոջ հետ
ըլլալու ճամբան, Տիրոջ կողմէ՝ իր դրախտին մէջ յիշուելու
ճամբան: Չվախնանք Գողգոթայի խաչէն. անիկա Դրախտի
ճամբան է, ուրկէ Տէրը քալեց:

Երկինքի Խաւարումին Մասին

Յիսուսի խաչելութեան պահուն՝ կէսօրուայ ժամը 12-ին երկինքը խաւարով պատուեցաւ եւ խաւարը երեք ժամ տեւեց (Մտ 27.45): Արդ, ինչո՞ւ համար խաւարեցաւ երկինքը.-

Երկինքը խաւարեցաւ, ցոյց տալու համար մեզի, թէ Քրիստոս կը մեռնէր մեղքի խաւարը փարատելու համար:

Երկինքը խաւարեցաւ, որպէսզի մենք լոյսի զաւակներ դառնանք եւ լոյսի կեանք ապրինք:

Երկինքը խաւարեցաւ, որովհետեւ չէր կրնար անտարբեր մնալ ի տես լոյսի Արարիչին խաչելութեան:

Երկինքը խաւարեցաւ, որպէսզի ցոյց տրուի մեզի, թէ մեր երկնաւոր Հայրը եւ երկնային բոլոր մարմինները սգացին ու տրտմեցան ի տես Աստուծոյ Որդիին տառապանքին ու խաչելութեան:

Երկինքը խաւարեցաւ, որպէսզի ցոյց տրուի մեզի, որ երկինքը անտարբեր չմնաց իր Բնակիչին ու Գահակալին խաչելութեան ժամանակ, այլ խաչակից ու չարչարակից եղաւ անոր:

Երկինքը խաւարեցաւ, որովհետեւ տեսաւ կեանքի շունչ պարզեւող Աստուածը՝ խաչին վրայ շնչահեղձ կը դառնար:

Երկինքը խաւարելով մերկացաւ իր գեղեցկութենէն, որպէսզի մենք դառնանք գեղեցիկ վարդերը երկինքին:

Երկինքը խաւարեցաւ, որովհետեւ տեսաւ իր Տէրն ու Իշխանը մերկացուած խաչին վրայ:

Երկինքը խաւարեցաւ, որովհետեւ ականատես եղաւ թէ ինչպէս մարմնաւորները կ'անտեսեն իրենց համար մարմին առած անմարմին Աստուածը:

Երկինքը խաւարեցաւ, որովհետեւ վկայ եղաւ թէ ինչպէս մարդկութեան փրկութեան քաղցրութիւնը բերող Փրկիչին բերնին լեղի քացախ մօտեցուցին:

Երկինքը խաւարեցաւ, որովհետեւ վկայ եղաւ թէ ինչպէս երկինքի ու երկրի թագաւորը եղող Տէր Յիսուսի գլխուն վերեւ, ծաղրականօրէն «Թագաւոր հրէից» գրուեցաւ:

Երկինքը խաւարեցաւ ու դարձեալ լուսաւորուեցաւ, որպէսզի ցոյց տրուէր մեզի, թէ Քրիստոս ինքն էր որ իր խաչելութեամբ պիտի փարատէր մեր անօրէնութեանց խաւարը ու հաստատէր Աստուծոյ փառքին լուսաւորութիւնը: